

# Վ.ԵՐ. ԱՆԴՐԱՆԻԿ Ա. ՊԵՏԻԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Միտարանութեան Ընդհ. Ազգահօր ուղղուած պաշտօնական հարցադրումէ մը կ'իմանանք ցաւալի յարբ' Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Երիցագոյն հովիւ՝ Վ.Երայատուէլի Անդրանիկ Ա. Պետիկեանի մահուան, որ տեղի ունեցած է Փետր. 17ին, Սէյնթ Մէրի հիւանդանոցին մէջ (Օրրոճ, Նիւ Ճորջի, ԱՄՆ), 94 տարեկան հասակին:

Ոգրացեալը, շէնչոյ Պարտիզակի օրհնեալ շառաւիղ, գաւակն էր Վ.Եր. Առաքել Պետիկեանի (հեղինակ՝ Գիսակ զրչանուհոյ հրատարակած հարեւուսէ կ'ընթաց), որ իր նախնական կրթութիւնը ծնունդովայրին մէջ ստանալէ ետք՝ 1907ին աւարտած էր Պոլսոյ Ամերիկեան Ռոպրթ Գոթիճը, եւ հինոյ տարի ուսուցչութեան նուիրուած հոն: 1912ին անցնելով Միացեալ Նահանգներ՝ Երեւանի համալսարանին մէջ կր հետեւէր աստուածաբանութեան փոստակային թաղանթերուն: 1915ին՝ հոգեւոր հովիւ կր նշանակուէր Նիւ Եորքի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ համայնքին, զոր ձեռնհասօրէն կ'առաջնորդէր 38 տարի անընդհատ: Ընտանեկան բռնիք՝ որ կր կադմէր 1919ին, արջիկ գաւակի մը ծնունդով ալ օրհնուած էր:

Վ.Եր. Ա. Պ. Պետիկեան, իր հովուական աշխատանքին զուգընթաց՝ բարձրագոյն ծառայութիւն մըն ալ բերաւ ամերիկահայ հանրային ու մարդասիրական մարդերուն մէջ, որոքս ջերմօրէն սիրուած եւ զնահատուած մտաւորական, վաստակաւոր եւ անխոնջ խմբադիր ու հեղինակ:

Ա. Ա. Պետիկեան հիմնադրերէն եւ առաջնորդներէն մէկն էր Հայ Աւետարանական Ընկերակցութեան եւ անոր պատուակալ վարիչ-քարտուղարութիւնը ստանձնած է շուրջ քառասուրջ զար: Երկար տարիներ մաս կադմած է «Հայաստանի Կոչումակ» շարժաթերթի խնամակալ մարմնին, իրը առեւտարեա եւ անգամ՝ խմբադրական կադմին: 1959էն ետք՝ կ'ադմ է նոյն թերթին պատասխանատու խմբագիրը, ամսագրի վերածելով ամերիկահայ մամուլի աղբերակը հրատարակութիւնը, մինչեւ 1969, երբ՝ աւելի քան ութսունամեակ՝ սրտի տկարութեան հետեւանքով ստիպուարար քաշուեցաւ հանրային կեանքէ: ԱՊԱ ստորագրութեամբ լոյս ընծայած է բարձրագոյն հմտաղի խմբադրականներ:

Իր հանրային ծառայութեան մէկ ուրիշ սիրելի մարդն է կ'ադմ Հ. Բ. Ը. Միւթիւնը, որուն ձեռնարկներուն ի նպատակ էրկար տարիներ նուիրած է իր զրիչն ու լիզոն: Ան Պատուակալ Նախագահներէն էր Հ. Բ. Ը. Միւթիւն Ամերիկայի Կեդրոնական Յանձնաժողովին: 1946-1970 մաս կադմած է նաեւ Կեդր. Վարչութեան ժողովին. առ ի զնահատութիւն իր բարձրագոյն անձնանուէր վաստակին՝ Պատուակալ Անգամ հոչակուած էր Միւթիւն վերին մարմիններէն:

Ա. Ա. Պետիկեան՝ հայերէն եւ անգլիերէն լեզուներով տասնեակ մը հատարներ եւ զրքոյկներ լոյս ընծայած է, ընդհանրապէս կրօնարարական եւ պատմալոյս շարժական բովանդակութեամբ, որ ի յայտ կու գայ իւրալատուէ սձով եւ ներհուն խորհոյթ թախանցիկութեամբ. փարագրած է նաեւ կրօնական քանի մը լրատու թերթիկներ:

Իր հրատարակած հատարներն են. Մտփիս պրիսակէն (Վերջածումներ կրօնարարական եւ արդարին նիւթերու), սոյ. Փարիզ 1925, էջ 191:

Տօնական օրեր (Մտածութիւնք Գիսակի), սոյ. Փարիզ 1925, էջ 207:

Գիսակարան (Սոսք եւ խորհուրդք ի խորոց սրտի Գիսակի), սոյ. Նիւ Եորք 1967, էջ 248:

Մարդիկ եւ ժամանակ (Մտածումներ, հաւարածոյ՝ լոյս տեսած ընտիր պրութիւններու), Ա. հատար, Նիւ Եորք 1969, էջ 288. - Բ. հատար, Նիւ Եորք 1970, էջ 270:

Ծագլագագ մտածումներու, Նիւ Եորք 1970, էջ 383:

Ճրագ (Գիրք Ա-Ե), սոյ. Նիւ Եորք 1940-1963ի շրջանին, շուրջ 1000 էջ:

Բայց Վ.Եր. Ա. Ա. Պետիկեանի զլուխ-զսրծոցը կը մնայ անտարակոյս «Գրչանկարներ Պարտիզակի Գիւղին» հաստափոր հատարը (սոյ. Փարիզ 1950, էջ 270), որ ալքան սիրա եւ սոյի զրած է՝ կեանքի վերակոչելու իր պաշտելի ծննդավայրը, իր սարբիւրներով ու սօներով, իր թաղերով ու ծառերով, իր կրգով ու թոչաններով, իր ժամով ու զպրոցով, նոյնիսկ իր համով ու «հոտով» անուրկական ու բո-



յարիս սիրելի Պարտիզակր: Կատարեալ «Գիրք Մերն-  
գոց» մը՝ իր ծննդատեղին անմահ հուշերը յաւեր-  
ժայցնող:

Վեր. Ա. Ա. Պետրիկեան պաշտամունքի հասնող  
ջերմ սէր ու յարգանք կը տածէր Մխիթար Արքայապետ  
անձին ու իր հիմնած Մխարանութեան հանգչող ալ,  
սէր ու յարգանք՝ որոնք լրիւ արտայայտելու բառ  
չէր գտներ յաճախ, երբ առիթը ներկայանար խան-  
գապատօրէն ներբողելու Մեծ Աւրատապարիս անձն  
ու վաստակը:

«Մեր հիացամբ, սէրը եւ երախտագիրութիւնը՝  
հանգչող Մխիթար Արքայապետ եւ անոր նուիրեալ ժա-  
ռանդորդներուն եւ գիրենք իրենց հոգիին եւ գոր-  
ծերուն մէջ ապրեցնողներուն, սա անցնող 250 տա-  
րիներու զննթացքին — կը յարտարարէր ան, նուիրա-  
կան օր մը, «Կոչնակ» իր զննթերցողներուն — անվի-  
րապահ է եւ անտահման» (տե՛ս Մարգրիկ եւ Փամա-  
նակէ, Բ. հտ. ներս Երբք 1979, էջ 266):

Զգացումներ, որոնք ան ժառանգած է իր հայ-  
րիկէն՝ Գիտակէն, որ սենեցած է «իր սրտին խորա-  
նին վրայ, Քրիստոսէ կողմ, երեք նուիրականութիւն-  
ներ, աւելի շրտակ բացատրութեամբ՝ «խորհուրդ-  
ներ», որոնք իր պաշտումին առարկաներն էին. մէ-  
կը՝ հայ ազգը... միւրը՝ հայ Եկեղեցին... եւ եր-  
րորդը՝ Մխիթարեան Մխարանութիւնը (իր երկու  
ձեւերով), իրենց անդուպական ծառայութիւնով  
հայ պատիարակութեան, մշակութիւն պահպանման  
եւ պարպայման, եւ անոնց ինքնաբերական գոյութեան  
տեսականութեան»:

«Մխիթար Արքան — կը յարէր Ա. Ա. Պետրիկեան —  
այնքան սիրելի եղած է մեզի համար (որ մխարան մը  
չենք) որքան սիրելի է անոր հիմնած Մխարանու-  
թեան անդամներուն համար: ... Մեր ներքին պան-  
թէանին մէջ, հերոսներու կարգին, Մխիթար Արքան  
իր նուիրական տեղը սենի, ինչպէս նաեւ սենին իր-  
մէն հիները եւ «սուրբերք» — Քրիստոս Լուսաւորիչ,  
Սահակ եւ Մեսրոպ, Ներսէս Ծնորհալի: ... Ասոնք  
են մեր արգալին պատմական կեանքին յեռնակա-

տարներն, որոնք երբեք չեն անյայտանար մեր տե-  
սութեան հորիզոններէն»: Ու կ'եզրակացնէր. «Այս  
զգացումները մեղանով չէ որ կը պրենք, հապա մեր  
սրտին տաք արիւնովը, անջնջելի եւ կենսալի: Յի-  
չէն միայն Մխիթար Արքայի անունը՝ մեզի համար  
մրմունջ մըն է երախտագիր պոփօթքի առ Աստ-  
ուած...»:

Այս միեւնոյն զգացումներով օծուել է իր վերջին  
նամակը, ուղղուած Մխարանութեան նորրնակ  
Արքայապետ Գեր. Պօպոս Վրդ. Անանեանի, 1 Յուն-  
ուար 1971 թուակիրը, որ կը պահուի Ս. Ղազարու  
գիւղանին մէջ, որմէ ներքեւ մեզի հակիրճ մէջբերում  
մը կատարել՝ երկիւղած զգացումներով՝ մեր յու-  
շարկանի աւարտին:

Կը գրէ, ուրեմն, Վեր. Ա. Ա. Պետրիկեան. «Մխի-  
թարեան Մխարանութեան անպաշտօն խոնարհ ան-  
գամ մը նկատեցէք զիս: Իմ սուրբերէս մէկն է նաեւ  
Մխիթար Արքան: Անոր կատարած գործին հաւա-  
սարող գործ կատարած են՝ մեր պատմութեան մէջ՝  
միայն Սահակ եւ Մեսրոպ: Անմահ է անոր յիշա-  
տակը իմ մէջս: ... Իրբեւ խոնարհ ամն ծառայ մեր  
արգալին զրականութեան եւ ուսման, երախտագրա-  
ւեմ անմահն Մխիթար Արքայի եզական ծառայու-  
թեան՝ մեր արդին իմացական եւ հոգեւոր մշակոյ-  
թին: ... «Եթէ փոխանակ Ամերիկա գալու 1912ին,  
Վենետիկ գոյի, թերեւս հիմա ձեր մխարաններէն  
մէկը փոքր պիտի ըլլայի, անարժանարար, բայց  
թերեւս՝ նախախնարար: Արդքան խորունկ է իմ սէրս  
եւ հիացումս Մխիթարեանց հանգչող: Մխիթար Ար-  
քայէն աւելի մեծ հերոս կամ սուրբ մը չունիմ՝ որ  
իմ կեանքս կը ներշնչէ»:

«Կեանքիս սա անցնող երկար տարիներուն (85  
տարեկան էր՝ երբ կը գրէր այս տողերը) միայն մէկ  
անգամ այցելեցի Վանքը: Աւա՛ղ, այդ թուականնե-  
րու սիրելի եւ հիանալի մխարաններէն ոմանք, որոնց  
հետ անձնական բարեկամական կապեր հաստատած  
էի, անցած են իրենց երկնաւոր վարձատրութեան:  
Ինձի նման Պարտիզակրներ էին: Գիտէ՞ք՝ որոնց  
կ'ակնարկեմ: (Կակնարկէ՝ Թորոսեանին, Ղազիկ-  
եանին, Պատուրեանին, Տաթևեանին): Բայց իմ սէրս  
եւ հիացումս տեղի հետ կապուած չէ, հապա՛ ան-  
ձերու թանկագին հոգիին հետ: ... Ըսել կ'ուզեմ  
արդքան խորունկ սիրով հոգիս կապուած է Մխար-  
անութեանց հետ, եւ այդքան խորունկ է նաեւ հիա-  
ցումս ձեր հանգչող»:

Աստուած հոգիւ շուտաւորէ, սիրելի՛ (ներեցէ՛ք՝  
որ այս անգամ չանուանեմ Վերապատուելի, այլ)  
Եղբայր Անդրանիկ: Բու վաստակը ալ մեծ է եր-  
կրնքի շնորհներով քեռնաւոր: Դուն Պարտիզակի հա-  
րապատ եւ օրհնեալ զաւակներէն մէկն եղար: Յի-  
շատակ յաւերժօրէն պիտի ապրի Մխիթարի հոգե-  
ւոր գաւակներու սրտին մէջ, որոնք ինկաւէտ ապօթք  
սենին քեզի համար, եւ քու խօսքերէն քաջալերուած,  
ապօթք ու նուիրում՝ ի սպաս մեր սիրելի ժողովուր-  
դին:

Հ. ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԵԱՆ